ԱՊԱՀՈՎԱԳՐՎԱԾ ԱՆՁԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Ապահովագրված անձն իրավունք ունի՝

- պայմանագրով սահմանված կարգով ստանալու պայմանագրով նախատեսված ծառայությունները,
- ապահովագրողից ստանալու տեղեկատվություն պայմանագրի՝ իրեն վերաբերող դրույթների վերաբերյալ,
- վաղաժամկետ լուծելու պայմանագիրը՝ ՀՀ օրենսդրությամբ և պայմանագրով նախատեսված դեպքերում,
- պայմանագրին համապատասխան պահանջելու բժշկական օգնության և ծառայությունների տրամադրում՝ բժշկական հաստատություններից,
- ապահովագրողի կողմից տրամադրված ապահովագրության քարտը կամ ապահովագրողի կողմից տրամադրված այլ փաստաթուղթ կորցնելու դեպքում ստանալու կրկնօրինակը
- օգտվելու ՀՀ օրենսդրությամբ և պայմանագրով նախատեսված այլ իրավունքներից:

2. Ապահովագրված անձը պարտավոր է՝

- Ապահովագրության պայմանագրով նախատեսված բժշկական ծառայությունների (միայն ապահովագրության պայմանագրով նախատեսված ծառայություններ ստանալու դեպքերում) ստացման համար ապահովագրական պատահարի մասին հեռախոսազանգով (+374 11 56 04 04, +374 12 56 54 04 04 հեռախոսահամարներով) ոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում, տեղեկացնել «ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ: Շտապ և անհետաձգելի բժշկական օգնություն պահանջող դեպքերում «ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ տեղեկացնելու պարտավորությունը ծագում է բժշկական կազմակերպություն դիմելուց հետո՝ առաջին իսկ հնարավորության դեպքում,
- ապահովագրողին իրավունք տրամադրել ծանոթանալու իրեն վերաբերող բժշկական փաստաթղթերի, տեղեկությունների հետ, որոնք անհրաժեշտ են պայմանագրի կատարման համար,
- կատարել ՀՀ օրենսդրությամբ և պայմանագրով նախատեսված այլ պարտավորություններ: